ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 23 մարտի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Մ. Թոփուզյանի

Քննության առնելով քաղաքացի Նելլի Մկրտչյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Քաղաքացի Նելլի Մկրտչյանը ՀՀ սահմանադրական դատարան է դիմել 06.03.2012թ.: Դիմողը խնդրել է որոշել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 18-րդ, 19-րդ եւ 20-րդ հոդվածներին համապատասխանության հարցը:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ՝

1. Դիմողի կարծիքով՝ վերոնշյալ օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված սահմանափակումը, այն է՝ վերաքննության իրավունքի իրականացման սահմանափակումը միայն նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը գերազանցող գույքային պահանջներով, զրկում է իրեն՝ իր խախտված իրավունքների դատական պաշտպանության իրավունքից:

2. Ներկայացված դիմումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27, 28 եւ 69-րդ հոդվածների պահանջներին:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 եւ 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Քաղաքացի Նելլի Մկրտչյանի անհատական դիմումը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ, ընդունել քննության, կազմել գործ:

2. Գործով որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

3. Բավարարել պետական տուրքից ազատելու վերաբերյալ դիմողի միջնորդությունը:

Նախագահող՝

Անդամներ՝

23 մարտի 2012 թվականի
ՍԴԴԿՈ/2-6